ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«19» դեկտեմբերի 2018 թ. № 765-Հ

# ՀՐԱՄԱՆ

## ՀԱՐԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N4058-Ա, 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N745-Ա, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N57-Ա, 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N11-Ա, 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N296-Ա ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N141-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) հարկային ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման, անցկացման և իրացման կանոնակարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի,

2) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության կասեցման, ինչպես նաև կասեցումը տուգանքի վճարմամբ փոխարինելու ընթացակարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի,

3) հարկ վճարողի հարկման բազաների գնահատման (վերագնահատման) արդյունքների կիրառման վերաբերյալ որոշման օրինակելի ձևը՝ համաձայն թիվ 3 հավելվածի,

4) պիտանիության (պահպանման) ժամկետում վերջնական սպառողներին չօտարված, սակայն դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների դուրսգրման գործընթացին հարկային ծառայող(ներ)ի մասնակցության ընթացակարգը՝ համաձայն թիվ 4 հավելվածի,

5) միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրությունների կազմակերպման և ուսումնասիրությունների արդյունքների իրացման, ինչպես նաև ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով մինչև 20 միլիոն դրամի հայտերի հիման վրա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները միասնական հաշիվ մուտքագրման պարզեցված ընթացակարգի կիրառման կարգը՝ համաձայն թիվ 5 հավելվածի,

6) հարկ վճարողին հարկային մարմնում հաշվառումից հանելու կարգը՝ համաձայն թիվ 6 հավելվածի,

7) հարկային հսկողության շրջանակներում փաստաթղթեր, իրեր և (կամ) փորձանմուշներ վերցնելու և վերադարձնելու արձանագրության օրինակելի ձևերը՝ համաձայն հավելված ՎՎ-ի,

8) հարկային հսկողության ընթացքում փորձաքննության նշանակման մասին հարկ վճարողին տեղեկացնելու վերաբերյալ արձանագրության օրինակելի ձևը՝ համաձայն հավելված ՓՈՏ-ի,

9) հսկիչ գնման ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ արձանագրության օրինակելի ձևը՝ համաձայն հավելված ՀԳԽ-ի,

10) հսկիչ դրամարկղային մեքենայի (ՀԴՄ) աշխատանքն արգելափակման ենթակա լինելու վերաբերյալ արձանագրության օրինակելի ձևը՝ համաձայն հավելված ՀԴՄԱ-ի,

11) հարկ վճարողի դիմումով ներկայացված օբյեկտում հսկիչ դրամարկղային մեքենայի (ՀԴՄ) գրանցման վերաբերյալ եզրակացության օրինակելի ձևը՝ համաձայն հավելված ՀԴՄԵ-ի,

12) հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց աշխատանքին (ծառայողական պարտականությունների կատարմանը) խոչընդոտելու,

նրանց օրինական պահանջները չկատարելու վերաբերյալ արձանագրության օրինակելի ձևը՝ համաձայն հավելված ԱԽՈՉ-ի,

13) հարկային ստուգումների և ուսումնասիրությունների հանձնարարագրերի և արձանագրությունների (նախագծերի) ձևերը՝ համաձայն ՀՀՍ, ԱՀՍՆ, ԱՀՍ, ՀԹՍ, ՏՊՀԹՍ, ԱԹՍՆ, ԱԹՍ, ՀՈՒՍ, ՏՊՀՈՒՍ, ԱՈՒՍՆ, ԱՈՒՍ, ՇՀՈՒԱՆ, ՇՀՈՒԱ և ԿՈՒԱ հավելվածների,

14) չափագրման ուսումնասիրության արձանագրությանը (նախագծին) կից օրական և ամփոփ արդյունքների վերաբերյալ տեղեկանքների ձևերը՝ համաձայն հավելված ՉՓՄ Ներդիր 1-ի և Ներդիր 2-ի,

15) գույքագրված ապրանքների (արտադրանքի) փաստացի և փաստաթղթային մնացորդների տարբերությունների վերաբերյալ համեմատական տեղեկագրի ձևը՝ համաձայն հավելված Համեմատական պակասորդ-ի,

16) համալիր հարկային ստուգումը և միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրությունը վերջնաժամկետից շուտ ավարտվելու դեպքում դրա մասին հարկ վճարողին ծանուցման օրինակելի ձևը՝ համաձայն հավելված ԾՎՇԱ-ի:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետին՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հարկային ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների ամփոփման բոլոր ակտերն ու արձանագրությունները (դրանց նախագծերը) հրամանով հաստատված ձևաթղթերին համապատասխան ստուգման հանձնարարագրերի և ակտերի հաշվառման ավտոմատացված համակարգի միջոցով կազմելու (տպելու), ինչպես նաև սույն հրամանի հավելվածներով նախատեսված տեղեկատվությունը համակարգ և հարկային մարմնի տեղակատվական բազա («Հարկատու 3» համակարգ) մուտքագրելու հնարավորությունը:

3. Սահմանել, որ սույն հրամանում նշված ստուգումների պլանավորման ստորաբաժանում (այսուհետ՝ ՍՊՍ) է հանդիսանում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչությունը (հարկային ստուգումների ռիսկերի գնահատման և վերլուծության բաժինը), իսկ ստուգումների դիտարկման

ստորաբաժանում (այսուհետ՝ ՍԴՍ)՝ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչությունը (ստուգումների դիտարկման բաժինը):

4. Սույն հրամանի հավելված 1-6-ով նախատեսված փաստաթղթաշրջանառությունն իրականացնել բացառապես էլեկտրոնային եղանակով:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից, բացառությամբ հրամանի հավելված 1-ի 63-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից և տարածվում այդ պահից հետո տրվող հանձնարարագրերի վրա:

6. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել.

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Հարկ վճարողին հարկային հաշվառումից հանելու մասին» N4058-Ա հրամանը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի ապրիլի 28-ի «Հարկային մարմնի կողմից ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման, անցկացման և իրացման կանոնակարգը հաստատելու մասին» N745-Ա հրամանը,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի փետրվարի 27-ի «Անուղղակի հարկերի գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարների, միջազգային համաձայնագրերի դրույթները կիրառելու արդյունքում վերադարձման ենթակա՝ ուղղակի կամ գույքային հարկերի գումարների արձանագրման նպատակով հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրությունների անցկացման կարգը հաստատելու մասին» N57-Ա և 2017 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի փետրվարի 27-ի թիվ 57-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N296-Ա հրամանները,

4) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013 թվականի հունվարի 11-ի «Չափագրումների կանոնակարգման և դրանց արդյունքների դիտարկման մասին» N11-Ա հրամանը,

5) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի մարտի 19-ի «Մասնակի ստուգումների (ուսումնասիրությունների) կազմակերպման և անցկացման հետ կապված գործընթացների կանոնակարգման մասին» N141-Ա հրամանը:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 12/19/2018 13:18:28 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

ՔԱՐՏԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՔԱՂՎԱԾՔ**

ՀՀ ՊԵԿ նախագահի
2018թ-ի դեկտեմբերի 19-ի
N 765-Ա հրամանի
Հավելված 1-ից

11. Ըստ ստուգման տեսակների՝ հանձնարարագիր տալու լիազորություն ունեցող պաշտոնատար անձինք են, և հանձնարարագրով սահմանվող ստուգման ժամկետներն են.

| № | **Ստուգման տեսակը** | **Հանձնարարագրեր տալու լիազորություններ ունեցող պաշտոնատար անձը (անձինք)** | **Ստուգման ժամկետ (մինչև անընդմեջ աշխատանքային օր)** |
|---|---|---|---|
| 1 | համալիր հարկային ստուգում | հարկային մարմնի ղեկավար | 15 |
| 2 | վերստուգում | | |
| 3 | հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում | հարկային մարմնի ղեկավար,<br>հարկային տեսչություն-վարչության պետ | 10 |
| 4 | ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում | | |
| 5 | ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կիրառման ճշտության ստուգում | | |
| 6 | աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտության ստուգում | | |

12. Ըստ ուսումնասիրության տեսակների՝ հանձնարարագիր տալու լիազորություն ունեցող պաշտոնատար անձինք են, և հանձնարարագրով սահմանվող ուսումնասիրության ժամկետներն են.

| № | Ուսումնասիրության տեսակը | Հանձնարարագրեր (հրամաններ) հրապարակելու լիազորություններ ունեցող պաշտոնատար անձը (անձինք) | Ուսումնասիրության ժամկետ (մինչև անընդմեջ աշխատանքային օր) |
|---|---|---|---|
| 1 | չափագրում | հարկային մարմնի ղեկավար | 10 |
| | | | 15<br>(հարկային տարվա որևէ ամսում իրացման շրջանառության կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազայի (առանց ակցիզային հարկի) 100 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողի մոտ) |
| 2 | հանդիպակաց ուսումնասիրություն | | 5 |
| 3 | հսկիչ գնում | հարկային մարմնի ղեկավար,<br><br>հարկային տեսչություն-վարչության պետ | 10 |
| 4 | միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն | | |
| 5 | Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացած եկամուտներից վճարված հարկի գումարի վերադարձի նպատակով ուսումնասիրություն | | |
| 6 | Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան օտարերկրյա պետության լիազորված մարմնի հարցումներին պատասխանելու նպատակով ուսումնասիրություն | | |